ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ավելի քան երեք տասնամյակ է բաժանում մեզ Հովհ. Թումանյանի նամակների առաջին հրատարակությունից։ Հետագա տարիներին տպագրվածները լրացրել են նամականին, բայց երբեք չեն սպառել այն բազմակողմանի նյութը, որ տալիս են նամակները Թումանյանագիտությանը։ Այժմ մեր ձեռքի տակ են 120 և ավելի նամակներ, բացիկներ, որոնց մեծ մասը պահվում է Թումանյանի ժառանգների մոտ, փոքր մասը՝ Գրականության և արվեստի թանգարանի արխիվում։

Այս հաղորդման նպատակն է ծանոթացնել ընթերցողին գրողի ընտանիքի արխիվում պահվող անտիպ նամակներին, որոնք սիրով, այլ նյութերի հետ, մեր տրամադրության տակ են դրել Թամար և Արփենիկ Թումանյանները, ընդառաջելով Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նախաձեռնած՝ Թումանյանի երկերի գիտական նոր հրատարակության և բանաստեղծի կյանքի ու գործի տարեգրության պատրաստման աշխատանքներին։

Անշուշտ, անտիպ նամակներն ընդհանուր առմամբ չունեն այն արժեքը, ինչ տպագրվածները. տարիների ընթացքում, տարբեր ժամանակ, տարբեր առիթներով նորից ու նորից ընտրվելով՝ հրապարակվել են գրական, հասարակական տեսակետից արժեքավորները։ Եվ չնայած դրան, անտիպ նամակները մեծ մասամբ գիտական նոր հրատարակության մեջ կմտնեն ոչ նրա համար միայն, որ գրվել են մեծ բանաստեղծի ձեռքով։

Լ. Շանթը 1913 թ. Լոզանում բանաստեղծի դստեր՝ Աշխեն Թումանյանին հանդիպելուց հետո հետևյալ տողերն է գրել սիրելի ընկերոջը. «Լրագիրներուդ մեջ կը հետևի քու հոդվածներուդ, ժողովներուդ, վեճերուդ, մեկ խոսքով դուրսի Օհանեսը. Աշխենդ ինծի բերավ ներսի Օհանեսը, ինտիմը, իմ Օհանեսս, որուն խորապես կարոտեր եմ»։

Քննության առարկա նամակները նախ և առաջ բաց են անում էջեր, որոնք վերաբերում են, Շանթի խոսքերով ասած, «ներսի, ինտիմ» բանաստեղծին։ Դրանք մեծ մասամբ առօրեական, անձնական-ընտանեկան են։ Այստեղ Թումանյանը ընթերցողին ներկայանում է որպես մի մեծ հայկական գերդաստանի նահապետ, որը տանը թե դրսում, կառավարում է ընտանիքը, դաստիարակում երեխաներին, օգնում նրանց իր իմաստուն խորհուրդներով, սովորեցնում ճիշտ ապրել։

Թումանյանագետ Ա. Ինճիկյանի արժեքավոր մենագրության առաջին հատորում անտիպ նամակներից օգտագործված են 3—4-ը։ Նամակների ստվար մասը վերաբերում է բանաստեղծի կյանքի 900-ական թթ. շրջանին և

կյանքի վերջին տարիներին[1]։ Հեղինակը դրանք, անշուշտ, կօգտագործեր իր մենագրության երկրորդ հատորում, որը, ցավոք, չգրվեց։

Ընտանեկան արխիվի նամակները ամենից առաջ լրացնում են Թումանյանի կենսագրությունը։

Հայտնի է, որ 1890 թ. աշնանը Թումանյանը կանչվում է զինվորագրության. դրան վերաբերող որոշ փաստեր արդեն հրապարակված են։ Բայց կարևոր է նաև կնոջը ուղղված 1890 թ. հոկտեմբերի 7-ի անտիպ մի նամակը, որից պարզվում է, որ զինվորագրությունից ազատելու համար Թումանյանին առաջարկել են ուսուցչության գնալ Փիբ, Գանձակ և Դիլիջան գյուղերը։ Գնալուն կողմնակից է եղել նաև գեռատի կինը, իսկ նա մերժել է, չուզենալով թողնել Թիֆլիսը, ընտանիքը, չուզենալով զրկվել ազատությունից, որ առանց այն էլ խաթարված էր հոգևոր կոնսիստորիայի ձեռքի միջավայրով։ Այդ այն ժամանակ էր, երբ Թումանյանը անհամբերությամբ սպասում էր իր բանաստեղծությունների առաջին հատորին, մտահոգված էր գրքի բաժանորդագրությամբ, երկրորդ հատորի տպագրությամբ և այլն։ «Այստեղ քեզ պարզ չեմ կարող գրել... թե ինչու մերժեցի,— գրում է Թումանյանը,— սակայն այսքանն իմանաս, որ ես չեմ կարող աչքերս բաց, հանգստության համար դագաղի մեջ պառկել, թեկուզ նա ոսկուց լիներ շինած։ Դուն երևի խորամուխ չես եղել մինչև հետևանքը իմ ուսուցիչ լինելուս... (հեռանալ այստեղից, թեկուզ հինգ օրով)։ Ես էլ առաջին անգամ այս միջոցը փրկարար համարեցի, բայց շուտով հիասթափվեցա։ Իսկ այժմ քո պատասխանը դրեց ինձ մի այնպիսի դրության մեջ, որ ես ստիպված եմ անբախտ Համլետի նման բացականչել. «Լինե՞լ, թե՞ չլինել...»։ Նույն նամակից պարզվում է, որ Թումանյանի խնդրանքով Ալ. Գոլոշյանի հայրը դիմում է գրել զինվորագրական ատյանին՝ ազատելու նրան հառաջա զինվորական ծառայությունից՝ որպես հոր միակ աշխատավոր զավակի։ Այլ առիթով նա խոստովանել է, որ «սիրում է զինվորի պաշտոնը»[2], բայց կաշկանդված է ընտանեկան հանգամանքներով, նյութական անապահով վիճակով։

Անտիպ նամակների միջոցով Թումանյանի կենսագրությունը լրացվում է նաև այնպիսի փաստերով, որոնք վերաբերում են նրա գրական աշխատանքներին։ Ինչպես 1901 թ. Ուրավել, այնպես էլ 1902—1903 թթ. Աբաս-Թուման մեկնելը Թումանյանը կարողացավ իրականացնել միայն իր մտերիմ բարեկամների՝ իշխանուհի Մ. Թումանյանի և Փ. Վարդազարյանի օժանդակությամբ։ Նրանց նպատակն էր բանաստեղծին ստեղծագործելու հնարավորություն տալ, և նրանք էլ ստիպեցին Թումանյանին նախաձեռնել 1903 թ. բանաստեղծությունների ժողովածուի հրատարակությունը։ Այդ հարցի շուրջը Թումանյանի վարած բանակցությունների մասին խոսում են նրա գրած հայտնի նամակները։ Լրացուցիչ հետաքրքրական տեղեկություններ տալիս են նաև արխիվային անտիպ առանձին նյութեր, այդ թվում Շանթի նամակները Թումանյանին. Շանթի մի անտիպ նամակում շարադրված է նույնիսկ այն շրջաբերականը, որով ցանկացել են դիմել դրամատերերին բաժանորդագրու-

1 Տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհ. Թումանյան. Կյանքի և ստեղծագործության պատմություն, Երևան, 1969, էջ 204, 367, 425։

2 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. V, Երևան, 1945, էջ 27։

թյուն սկսելու համար։ Պահպանվում է նաև Թումանյանի 1902 թ. մի նամակը ուղղված կնոջը, նույն գործի վերաբերյալ. «Ահա, օրինակ, հենց այժմ երկու խնդրի առիթով նամակագրություն ունենք— վիճում ենք,— գրում է նա,—և ես ոչ միայն տեղի չեմ տալ, այլ թույլ էլ չեմ տալ, որ վիճեն այդ մասին։ Թեև երկուսն էլ նրանք (խոսքը Մ. Թումանյանի և Փ. Վարդազարյանի մասին է—Լ. Կ.) իմ օգտի համար են մտածում։ Նրանք առաջարկում են, կարգադրել են, որ ես ամբողջ ձմեռն ու գարունը, և մինչև անգամ մի տարի մնամ այստեղ. իսկ ես ունեմ իմ որոշումը, և պրծավ գնաց։ Նրանք ուզում են այժմ իմ գիրքը շքեղ հրատարակեն, մտցնեն, որքան կարելի է, շատ ոտանավոր, նշանակեն, որքան կարելի է, թանկ գին, և, այժմ ևեթ սկսեն հարուստ շրջաններում բաժանորդագրություն, խոստանում են հինգ հազար ռուբլի, իսկ ես ուրիշ տեսակ եմ մտածում, և կանեմ այնպես, ինչպես ես եմ ուզում։ Կան բաներ, այո, որտեղ կարելի է խաթր անել, մանավանդ, այնպիսի մարդկանց, որոնք այդքան բարյացակամ են և այդքան լավություն են անում. բայց մարդ պետք է իրեն ճորտ չդգա և ասի ու անի այն, ինչ որ ինքն է համարում լավ»[3]։ Այս տողերից ու շարունակությունից երևում է, որ դրանք այն օրերն են, երբ Թումանյանը խորապես վիրավորված էր հրատարակությունը հեշտությամբ և արագ իրագործելու համար Մ. Թումանյանի, Փ. Վարդազարյանի և Շանթի որոշումից՝ դիմել դրամատերերի և բաժանորդագրություն սկսել։ Թումանյանի վրա ազդում են նաև կնոջից նույն օրերին ստացած մի նամակի այն տողերը, թե մենք մեր կամքով չենք ապրում։ Ահա՛ թե ինչ է գրել բանաստեղծը այդ առթիվ. «Վերջ ի վերջո այնպես պետք է չլինի, որ մարդ ասի, թե մենք մեր կամքով չենք ապրում։ Այս ինձ սաստիկ վիշտ պատճառեց։ Կամքն ու ապրելն այնպիսի բաներ են, որ եթե դրանք ենթարկված են ուրիշին, էլ կյանքը ո՛չ մի խորհուրդ ու քաղցրություն չունի, այլ տանջանք է, լուծ է մի տեսակ ու մարդը՝ ճորտ»։

Ինչպես տեսնում ենք, այս անտիպ նամակը ամփոփում է 1903 թ. ժողովածուի նախապատրաստման ժամանակ Թումանյանի գրագրությունների բովանդակությունը, թեպետ կնոջը գրած նամակում, բնական է, նա իրեն ավելի ազատ է զգացել իրողությունների էությունը ի հայտ բերելիս։

1903 թ. մի նամակում հայտնում է. «Գիրքս այժմ պատրաստ եմ համարում։ Այն բոլոր բաները, որոնք ծանր էին թվում, անց են կացած—վերջացած են...»։ Դժբախտաբար, նամակը պակասավոր է. չենք կարող ստույգ ասել, թե ո՞ր «ծանր բաների» մասին է խոսքը։ Առայժմ որևէ ուրիշ փաստ չունենք գրքի հրատարակության այլ դժվարությունների մասին։ Նամակի գրության հավանական օրերը (սեպտեմբերի 15—17-ը) զուգադիպում է գրքի տպագրության պաշտոնական-գրաքննչական թույլտվությանը, որ եղել է հոկտեմբերի 15-ին։ Շատ հնարավոր է, որ «ծանր բաներ» ասելով բանաստեղծը դարձյալ հիշում է ժողովածուն նախապատրաստելու ժամանակամիջոցի վերոհիշյալ վիճաբանությունները իր բարեկամների հետ։ Զեն բացառվում նաև գրաքննչական խստությունները, մանավանդ դրանից առաջ՝

3 Նամակն անթվակիր է, բայց կարելի է մոտավորապես որոշել, որ այն գրված է 1902 թ. Հոկտեմբերի 13—14-ին։

օդոստոսին, մի անտիպ նամակում գրել է. «Պետերբուրգից բանաստեղծություն էին ուզել. այսօր լրագրում հայտարարության մեջ կարդացի, որ ցենզորը մինը բռնել է։ Շատ ցավում եմ»։

1907 թ. ամռանը Թումանյանը Մանգլիսում, Շանթի ու Լիսիցյանի հետ պատրաստում էր «Լուսաբեր» դասագիրքը։ Կնոջը ուղղած հուլիսի 3-ի և օդոստոսի 2-ի նամակներից տեղեկություններ ենք քաղում դասագրքի պատրաստման ընթացքի մասին. «Էս դասագիրքը հոգիներս հանեց։ Միանգամայն հոգնել ենք։ Վերջապես ամենաշատը մասը վերջացրինք, մնացածը հեշտ է։ Բայց անկասկած եղած դասագրքերից ամենալավն է։ Արդեն տպագրության պատրաստություններ ենք տեսնում»։ Եվ ապա մի այլ նամակում. «Վճռեցինք, որ դասագրքի համար ումից բան վերցնենք՝ վճարենք, ով էլ մեղանից վերցնի՝ նույնպես վճարի։

Այնպես եղավ, որ առաջին տարում միայն Աղայանից մի երկու-երեք կտոր ուղեցինք դնել։ Նամակ պետք է գրեինք, թե ի՞նչ ես ուզում դրա համար, ես չհամաձայնեցի։ Էդ կնշանակեր, թե դու էլ ինձ վճարի, մանավանդ ինքը շատ ու շատ ավելի է վերցրել։ Այժմ Լիսիցյանն ու Շանթը նամակ են գրել, որ նա մեր գրքից օգտվի, մենք՝ նրա, եթե կուզի։ Իհարկե, այս նրա համար շատ է ձեռնտու»։ Այստեղ կարևոր են ոչ միայն «Լուսաբերի» պատրաստման մանրամասները, այլև Թումանյանի հոգատարությունը իր մտերիմ բարեկամի՝ Աղայանի նկատմամբ, որն, ինչպես հայտնի է, իր ամբողջ կյանքում նյութական կարիքի մեջ էր։

«Լուսաբեր» դասագրքի պատրաստման օրերին, 1907 թ. օգոստոսի 2-ին Մանգլիսից ուղարկած նամակում տեղեկություն կա «Ուլիկը» հեքիաթի մասին. պարզվում է, որ այն գրված է «Լուսաբերը» կազմելու ժամանակ, հավանաբար հունիսի կեսերին, նախնական վերնագիրը եղել է «Սևուկ». «Մի ուլիկի հեքիաթ եմ գրել, անունը դրել եմ «Սևուկ» դու էլ էդտեղ երեխի անունն ես Սևուկ դրել»,—գրում է կնոջը, ակնարկելով իր տասներորդ երեխային՝ Թամարին, որ երկու ամսական էր։ Չունենալով ձեռքի տակ այս անտիպ նամակը, «Երկերի» գիտական հրատարակության երրորդ հատորի ծանոթագրողը հնարավորություն չի ունեցել նշելու հեքիաթի նախնական վերնագիրը, գրության ժամանակը և տեղը։

Կարելի է բերել այլ օրինակներ ևս Թումանյանի գրական աշխատանքի, կարդացած և օգտագործած գրքերի մասին, բայց անցնենք նրա ճամփորդությունների ժամանակ գրած նամակներին, որոնք բանասիրական տեղեկություններ են հաղորդում բանաստեղծի հասարակական գործունեության մասին։

Թումանյանը իր ուղևորություններին մեծ նշանակություն էր տալիս նախ և առաջ իբրև ստեղծագործող։ Հիշենք հետևյալ հայտնի տողերը. «Բանաստեղծի համար տպավորությունները հարստություն են. վա՜յ այն բանաստեղծին, որ աղքատ է տպավորություններով։ Ես էլ այդ կողմից բախտավոր չեմ։ Իմ կարծիքով՝ դա բախտ է»[4]։ Նա շրջում էր հայաշատ վայրերում, շրջվում ժողովրդի հետ, նյութեր հավաքում նոր գործերի համար, հետաքրքրական հանդիպումներ ունենում տեղի գրական, հասարակական դեմքերի հետ։

4 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. V, էջ 190։

1901 թ. ամառվա վերջին Թումանյանը ճանապարհորդել է Ուրավեր— Աբասթուման — Ախալքալաք — Ալեքսանդրապոլ — Անի — Ղարաքիլիսա — Կարս — Թիֆլիս երթուղով։

Ալեքսանդրապոլից գրած սեպտեմբերի 2-ի նամակում նա պատմում է Անի քաղաքի ավերակներում պատահած մի միջադեպի մասին, որին մինչև այժմ տեղյակ էինք Իսահակյանի և Հ. Կոստանյանի հուշերից, ըստ որում, վերջիններս շփոթել են ճամփորդության ճշգրիտ ժամանակը։ Այս նամակի միջոցով ծանոթանում ենք Ալեքսանդրապոլում նրա անցկացրած երկու օրվա բովանդակալից կյանքին և ճշտում Փ. Վարդազարյանին գրած մի անթվակիր նամակի գրության ժամանակը՝ 3 սեպտեմբերի, 1901[5]։

Այդ ճամփորդության ժամանակ Թումանյանի օրերը անցնում էին չափազանց հագեցած։ Նույն նամակից տեղեկանում ենք, որ Ալեքսանդրապոլում երկու օրվա ընթացքում հասցրել է շտապ, հետաքրքրական հանդիպումներ ունենալ, լինել հայկական ակումբում, մասնակցել ներկայացման, Մխիթարյաններին նվիրված երեկույթին և այլն։

Հայտնի է, որ բանաստեղծի առաջին ուղևորությունը դեպի Արևմտյան Հայաստան տեղի է ունեցել 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին. ուղևորության նպատակն էր՝ փաստերով հերքել ցարական բանակի բարձրաստիճան զինվորականների մեջ տարածված աննպաստ կարծիքը գործող բանակում կենաց ու մահու կռիվ մղող հայ զինվորների մասին։ Նրա այդ ուղևորության շուրջը հրատարակվել է «Կարևոր հույսն ու դարևոր ճանապարհը» հոդվածը և դեկտեմբերի 10-ին Ղարսից գրած նամակը, որից հայտնի է, թե ինչ ողբերգական տեսարանների է ականատես եղել նա[7]։ Պահվում են նաև երկու անտիպ նամակներ։ Առաջինը մի քանի տող է՝ գրված 1914 թ. նոյեմբերի 20-ին Արծափից։ Այդ մի քանի տողից դարձյալ պարզվում է, թե որքան հագեցած է եղել Թումանյանի յուրաքանչյուր օրը. նա նոյեմբերի 19-ին դուրս է եկել Իգդիրից և ճահճուտներով անցել «Մասիսի թաքթաքուտները», իսկ 20-ին «Զինդիլի նշանավոր լեռնանցքը», որից հետո եղել է Հին Բայազետում, տեսել Մասիսը հարավային կողմից։

Հաջորդ նամակը, որ մեկ էջ է, գրված է երեք օրում՝ դեկտեմբերի 6-ին, 8-ին և 9-ին։ Այդ նամակից պարզվում է, որ բանաստեղծը դեկտեմբերի 5-ին ետ է եկել ռազմաճակատից դեպի Իգդիր, հետո հասել Էջմիածին, իսկ հաջորդ օրը սկսել է գրել իր այս նամակը, բայց զբաղված պաշտոնական հանդիպումներով՝ կարողացել է շարունակել միայն 8-ին՝ Երևանում։ Հայտնում է նաև, որ «մի երկու ժամից» ճանապարհ է «ընկնելու դեպի Ալեքսանդրապոլ—Սարեղամիշ և այլն»։ Նամակն ավարտվել է, ինչպես ասացինք, դեկտեմբերի 9-ին Ալեքսանդրապոլում. «Կաթողիկոսն էսօր գալիս է Ալեքսանդրապոլ,— գրում է նա,— գնում ենք ընդառաջ՝ վագոնում խոսելու և այնուհետև ճանապարհներս շարունակելու դեպի Ղարս—Սարեղամիշ։ Առայժմ շատ բան գրել չեմ կարող՝ ժամանակ ու հնար չկա։ Մինչև ամսի 20-ը կլինենք Թիֆլիս»։ Եվ ապա շարունակում է. «Լրացնում եմ Ղալթախչի կայարանում—եկել ենք կաթողիկոսի առաջը»։ Բանաստեղծի տպավորությունը

5 «Հովհ. Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 13, 461։
6 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 191։
7 Նույն տեղում, էջ 404, հատ., VI, էջ 202։

ները, իր առաքելության հետ կապված այլ մանրամասներ կարելի է կարդալ հաջորդ օրը, դեկտեմբերի 10-ին Ղարսից գրած նամակում։

Հայտնի է Թումանյանի գործունեությունը 1918 թ. ծանր օրերին, երբ նա ընտանիքի մի մասի հետ մեկնում է հայրենի գյուղ, որպեսզի մոտ լինի Ղազախի ու Բորչալուի շրջաններին, կազմակերպի ինքնապաշտպանության և խաղաղության գործը, իսկ հետո հատկապես զբաղվել է գաղթականության, որբերին տեղավորելու հարցերով։ Այդ մասին տպագրված պաշտոնական գրություններից բացի, որոնք հրապարակված են Երկերի ժողովածուի հինգերորդ հատորում, պահվում է նաև մի անտիպ նամակ, գրված շտապ, Քոբեր կայարանում։ Անթվակիր է, պետք է ենթադրել, որ գրված է հունիսի սկզբներին, Ղարաքիլիսան թուրքերից գրավելուց հետո. «Նվարդ ջան,— գրում է բանաստեղծը,— ես էս րոպեիս գերմանացիների մեծի մոտ էի։ Լավ կլինի ամեն բան։ Շատ սիրով վերաբերվեց, մանավանդ, երբ իմացավ բանաստեղծ եմ։ Ասում է՝ էս երկու օրը ամեն բան կվերջանա, բայց խորհուրդ տվեց, որ ես մի հասնեմ Թիֆլիս ու վերադառնամ։ Իրենք առավոտը վաղ էստեղից՝ Քոբերից, ժամը 6-ին ինձ կուղարկեն Սանահին, որ 7-ին գնամ Թիֆլիս։ Երևի մի օր կմնամ էնտեղ»։

Առայժմ հուշերից բացի ուրիշ լրացուցիչ փաստ չունենք պարզելու համար, թե ինչպես է կատարել խոստումը «գերմանացիների մեծը». Զ. Բաշինջաղյանը պատմում է, որ գերմանացի պարետը բանաստեղծին խոստացել էր վագոն տրամադրել՝ կանանց և երեխաներին Թիֆլիս տեղափոխելու համար, բայց հետո մերժել է, հայտարարելով, թե «գերմանա-թուրքական բարեկամական հարաբերությունները թույլ չեն տալիս փոխադրամիջոց հատկացնել հայերին, անդամ երեխաներին ու կանանց»։ Հնարավոր է, որ Քոբերից Թումանյանը գնացել է Սանահին, գուցե և մեկնել է Թիֆլիս, բայց վերադառնալուց հետո, այլևս ոչինչ չստանալով գերմանացուց, ինչպես Բաշինջաղյանն է գրում, զայրացած ասել է. «Քաղաքակիրթ բարբարոսները շատ վտանգավոր են»[8]։

Երեխաներին Թումանյանը սկսել է գրել 1903 թ. Աբասթումանից։ Այդ այն հայտնի նամակն է, որով նա սովորեցնում է հիշատակարաններ պահել։ Բայց անցնում են տարիներ, հոր և զավակների նամակագրության բովանդակությունը փոխվում է. կամաց-կամաց սկսում է խոսել նրանց հետ ինչպես հավասարը՝ հավասարի, բաց է անում հոգին, փիլիսոփայում է, մտորում, գրում ոչ միայն իրենց ընտանեկան կյանքի, այլև քաղաքական-հասարակական հարցերի մասին։ Այդպիսի նամակներում երևում է նաև անդուգական հայրը, որը թեպետ հիվանդ, հատկապես կյանքի վերջին հնգամյակում, ժամանակ առ ժամանակ հոգեպես վհատված, սակայն միշտ ամուր թիկունք էր զավակներին, հոդատար ձեռք։ «Ճիշտ է, տղերքը ցրված են,— գրում է բանաստեղծը,— և երևի երկար էլ էդպես կլինի, մյուսներն էլ հասած չեն, դու էլ հեռու ես, բայց Անուշն ու Նվարդը տանն են, և մեր տունը հաստատ է, որովհետև իմ հոգին հաստատ է, ինչքան էլ ալեկոծություններ ունենա»։ Այսպես էր գրում Թումանյանը ավագ դստերը՝ Աշխենին 1920 թ. սեպտեմբերի 25-ին, որից քիչ անց կրկին «ալեկոծվում է» նրա հոգին։

---

8 «Հովհ. Թումանյանը ժամանակակիցների հուշերում», էջ 742, 745։

1920 թ. սեպտեմբերի 24-ին սկսվեց Կարաբեքիրի հարձակումը Օլթիի վրա, իսկ 29-ին՝ արշավանքները մի կողմից դեպի Ղարս, մյուս կողմից՝ Սուրմալուի ուղղությամբ։ Այդ օրերին գրած մի նամակից պարզվում է, որ բանաստեղծը սեպտեմբերի 30-ին, հայ ժողովրդի համար այդ ճակատագրական պահին, մտադրվել էր մի անգամ էլ մեկնել պատերազմական գործողությունների վայրը։ Ահա թե ինչ է գրում նա այդ մասին.

«Մեր ֆրոնտի նոր աղետը սարսափելի ազդել է վրաս... Էսօր քիչ էր մնում, թե ճանապարհ ընկնեի դեպի ֆրոնտը»։

Դժվար է հավաստի որևէ բան ասել, թե ինչու Թումանյանը այս անգամ չգնաց ռազմաճակատ. ուրիշ ոչ մի տեղ այդ մասին ակնարկ չկա. թերևս լուր է ստացել, որ անօգնական ղորքը պատրաստվում է նահանջել։

Աշխեն Թումանյանին ուղղած այս նամակի արձագանքը մենք տեսնում ենք մի շաբաթ հետո, հոկտեմբերի 7-ին տպագրված «Վերջին վատությունները» հոդվածում, որտեղ անխնա քննադատում է «ոճրագործ էնվերներին ու թալիաթներին»[9]։

Ընտանեկան նամակները օգնում են ընթերցողին մոտիկից տեսնելու Թումանյանի սկզբունքայնությունը բոլոր հարցերում։ Անկախ նրանից՝ հոդված է գրել թե նամակ, հարազատի է գրել թե օտարի, բանավոր խոսք է ասել թե գրավոր՝ բանաստեղծը միշտ մնացել է իր ժողովրդի ցավերով մտահոգված գրող-քաղաքացի։

1920 թ. հոկտեմբերի 16-ի նամակով Թումանյանը դրսևորում է իր մի այլ վերաբերմունքը. «Եթե հրաշքով մի նոր դրություն չստեղծվեց,— գրում է նա,— ստեղծված դրությունը շատ է դժոխային և հղի ծանր հետևանքներով։ Ջեմ հասկանում, թե էս ձմեռը ո՞նց պիտի անցկացնի մեր դժբախտ ժողովուրդը։ Մանավանդ ժանտախտն էլ ներս է մտել, ցուրտն էլ ընկնում է, վառելիք էլ չկա։ Ինչևիցե։ Ճանապարհներ կան, որ տանում են անդունդի, և կույր գնացողը առհասարակ չի նկատում։ Երբ որ ափն է հասնում, նոր է նկատում. իսկ շատերը ընկնելուց հետո են իմաստուն դառնում»։ Այստեղ որոշակի է դաշնակցության նկատմամբ քննադատական վերաբերմունքը, որին մենք ծանոթ ենք այդ օրերին և հետո հրապարակած հոդվածներից, ինչպես և տպագրված շատ նամակներից։

Ամենաողբերգական պահերին անգամ հուսահատությանը, տխրությանն ու թախծին անմիջապես հաջորդում են Թումանյանին բնորոշ ամենակարող լավատեսությունն ու հույսը։ Ժողովրդի վիճակի «դժոխային» լինելը չի խանգարել «հրաշքով մի նոր դրություն» սպասելուն։ Առանց այդ հույսի ու լավատեսության երբեք չէին արվի այն գործերը, որ կատարել է բանաստեղծը վտանգներով լի ճակատագրական օրերին և չէին ծնվի այն հանրահայտ ստեղծագործությունները, որոնք դարձել են մեր ժողովրդի հոգևոր գանձերից և մուտք գործել համաշխարհային գրականություն։

Այժմ կանգ առնենք մի այլ հարցի վրա, որ նույնպես կապված է անտիպ նյութերի հետ։

Անտիպ նամակների մեջ պահպանվել են ևս երկու էջ, որոնցից մեկը Իսահակյանին ուղղած 1902 թ. նոյեմբերի նամակի շարունակությունն է՝

9 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. VI, Երևան, 1959, էջ 244, 457։

տպագրված «Երկերի» վեցերորդ հատորում, մյուսը՝ նույն թվականին կնոջն ուղղված նամակից դուրս մնացած հատված։ Ունենալով ձեռքի տակ ամբողջական նամակներ, հրատարակիչները կրքում դրել են՝ «Նամակն այստեղ ընդհատվում է»[10], այնպիսի տպավորություն է ստացվում, թե հեղինակն ինքն է ընդհատել։

Իսահակյանին ուղղած նամակի անտիպ էջից ենք իմանում, որ Թումանյանը այդ օրերին կարդացել է Իսահակյանի «Էս ի՞նչն է ամպում ղիլ թևին կուտա...» սկզբնատողով բանաստեղծությունը և հավանել. այդ տողը արտագրված է նամակում ու կողքին գրված՝ «սիրուն էր»։

Հիշեցնելու համար բերենք ամբողջ քառատողը.

Էս ի՞նչն է ամպում ղիլ թևին կուտա,
Գարնան գովքասան արտո՞ւտն է նիշուն
Ու ձենը ինչո՞ւ զարհուրիկ կուգա,—
Վախ, էս ագռավն է գլխիս պտտվում[11]։

Նամակներով ու նոր փաստերով ճշտվում են Թումանյանի հրատարակված որոշ անթվակիր նամակների գրության ժամանակները, որոնց մեջ սխալներ կան ոչ միայն օրերի, ամիսների, այլև 1, 2, 3, երբեմն և ավելի տարիների։

Մի հաղորդմամբ անհնարին է սպառել բանաստեղծի անտիպ նամակների ողջ նյութը։ Մեր նպատակն էր դրանցից մի մասին միայն անդրադառնալով, ցույց տալ, թե ինչպիսի կարևոր փաստեր են տալիս այդ նամակները գրողի գիտական կենսագրության, նրա կյանքի ու գործի տարեգրության համար։

О НЕОПУБЛИКОВАННЫХ ПИСЬМАХ ОВАНЕСА ТУМАНЯНА

Л. М. КАРАПЕТЯН

(Резюме)

Настоящее сообщение посвящено неопубликованным письмам Ов. Туманяна, хранящимся в его архиве. Несмотря на то, что эти письма, адресованные жене и детям поэта, в основном имеют семейно-личный характер, они тем не менее содержат много ценных данных о жизни Туманяна и о его общественной деятельности, начиная с юношеского периода и кончая последними годами его жизни. По этой причине письма являются важными материалами для составления научной биографии писателя, подготовки комментированного академического издания его произведений, а также летописи его жизни и деятельности.

10 Հով. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. V, էջ 222, 246։
11 Ավ. Իսահակյան, Երկեր, հատ. I, Երևան, 1958, էջ 158։